

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԻ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԽԹԱՆՆԵՐԸ

Ա. Մ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Պետական ձեռնարկության (միավորման) մասին օրենքը ընդգրկում է համալիր միջոցառումներ, որոնց իրականացումը արդյունաբերության մեջ կնպաստի տնտեսաշարկային խթանների ուժեղացմանը: Այդ օրենքի հաշվաձայն, ձեռնարկությունները գործում են ֆինանսական առաջնորդվելով տնտեսաշարկային սկզբունքներով: Տնտեսական գործունեության նկատմամբ ճյուղային նախարարությունների, հանրապետական ու տարածքային մարմինների ազդեցությունը սահմանափակվում է: Տնտեսապես ինքնուրույն ձեռնարկությունների հետ պետական կառավարման մարմինները իրենց հարաբերությունները պետք է կառուցեն, օգտագործելով տնտեսական ազդեցությունները, տնտեսական անկցիաները, գները և հարկերը, հարկային արտոնությունները, տնտեսական սակցիաները, ինչպես նաև այլ նորմաներ և նորմատիվներ, պայմանագրային հարաբերություններ: Դրա հետ միասին, տնտեսավարման հին համակարգից ներկայումս կիրառվում է՝ պլանավորումը, ՆՏՄ-ն, գնագոյացումը, ֆինանսական ու վարկային հարաբերությունները, դրամաշրջանառությունը, նյութական խթանումը, հաշվառումն ու վերլուծությունը, վերահսկողությունը, արտաքին տնտեսական գործունեությունը: Այդ գործում մեծ է տնտեսաշարկային լծակների՝ պետական պատվերների, տնտեսական նորմատիվների և պարզեցացումների դերը:

Ներկայումս դրանց փոխներգործության գործող մոդելը պահանջում է ավելի ուժեղացնել տնտեսաշարկային մեխանիզմի լավագույն տարբերակի դիտական որոնումները: Վերջինիս հիմնական գծերն են՝ պետության, ձեռնարկությունների և սպառողների պատվերների միջոցով արտադրվող արտադրանքի պահանջարկների ծավալի և կառուցվածքի համապատասխանումը, ձեռնարկությունների կառավարման մեխանիզմի կատարելագործումը: Վերջին տարիներին մեր հանրապետությունում իրագործվել են կարևոր որոշումներ տնտեսավարման նոր մեթոդի անցնելու համար: 1987 թ. լրիվ տնտեսաշարկի և ինքնաֆինանսավորման պայմաններում աշխատում էին արդյունաբերական տարբեր ճյուղերի՝ 61, 1988 թ.՝ ևս 204, իսկ 1989 թ.՝ արտադրական մնացած բոլոր միավորումներն ու ձեռնարկությունները¹: Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների պլանային կառավարման գործընթացի ուսումնասիրումը բացահայտում է, որ մեքենաշինական ձեռնարկությունների տնտեսական համակարգում պետական պատվերների բաժինը կազմում է մոտ 92 տոկոս: Արտադրանքի մատակարարման պայմանագրային պարտականությունները տնտեսաշարկային ձեռնարկություններում 1987 թ. կատարվել են 98,7, լրիվ տնտեսաշարկի շանցած ձեռնարկություններում՝ 96,7 տոկոսով:

Եթե տնտեսաշարկի անցած ձեռնարկությունների 24,9 տոկոսը չի կատարել սպարանքների մատակարարման պարտականությունները, ապա տրևա-հաշվարկի շանցածներինը՝ 15,9 տոկոսը: Չմատակարարած արդյունաբերական ապրանքներից 24,0 մլն. ռուբ. (84,0 տոկոսը) բաժին է ընկնում առաջինին: Միութենական ենթակայության նախարարությունների ձեռնարկությունները պայմանագրային պարտավորությունները կատարել են 96,8, միութենական հանրապետական ենթակայության ձեռնարկությունները՝ 99,2,

1 Միավորումները և ձեռնարկությունները հետագայում կանվանենք ձեռնարկություններ:

Հանրապետական ենթակայության ձեռնարկությունները՝ 20,8 տոկոսով: Բավական է նշել, որ մեղ Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ 1990 թ. արդյունքում վնասաբեր են եղել շուրջ 300 ձեռնարկություններ՝ մոտ 210 մլն. ութբլու վնասի դրամարով: Սիսյան արդյունաբերության մեջ վնասով են աշխատում 85 ձեռնարկություններ:

Մեր Հանրապետությունում 1990 թ. նախորդ տարվա համեմատ ազգային եկամուտը կրճատվեց 9,8, արդյունաբերական արտադրանքի արտադրությունը՝ 6,9, աշխատանքի արտադրողականությունը՝ 11,3 տոկոսով: Իսկ 1991 թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ազգային եկամուտը կրճատվեց 10,7, աշխատանքի արտադրողականությունը՝ 12,4 տոկոսով:

Ցուցանիշների անկումը կապված է տնտեսական կապերի թուլացման, ժողովրդական տնտեսությունը էներգապաշարներով ապահովվածության վատթարացման, հումքի և նյութերի բացակայության, մատակարարումների ձախողման, ձեռնարկությունների զանգվածաբար կանգ առնելու հետ:

Պայմանագրային պարտականությունները բավարար չափով չեն կատարել քիմիական մեքենաշինության (74,0), հաստոցաշինության (93,4), սարքաշինության (94,0), թղթի և փայտարդյունաբերության (96,5) նախարարությունների ձեռնարկությունները: Այստեղ կան նաև օբյեկտիվ պատճառներ: 1989 թ. պետական պատվերների տեսակարար կշիռը մեքենաշինական առանձին ձեռնարկությունների արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ կազմեց 50-ից մինչև 100 տոկոս, իսկ ֆոնդերի ապահովվածությունը՝ ընդամենը 60 տոկոս:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Երևանի «Ալմաստ» տեխնոլոգիական սարքավորումների արտադրական միավորումներում, Ֆրեզերային հաստոցների գործարանում պետական պատվերները կազմում են 70 տոկոս, 2 մլն. ութբլ. ապրանքային արտադրանքի համար չեն ապահովված նյութական ռեսուրսներ: Այստեղ հարկ չկա ընդհանրացնել եղած իրավիճակը, որ պետական ձեռնարկության (միավորման) մասին օրենքի բոլոր դրույթներին միայն պետական պատվերներն են կրում դիրեկտիվ բնույթ: Գործնականում պետական բոլոր պատվերները չպետք է կրեն դիրեկտիվ բնույթ, և ապրանքային իրացումը պետք է ոչնչով տեղերում, որպեսզի նպատակահարմար լինի ձեռնարկությանը: Ժողովրդական տնտեսության կայունացման և էկոնոմիկայի շուկայական հիմնական ուղղություններում² արտադրանքի 1991 թ. պետական մատակարարումների սահմաններում արտադրության նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովումը կատարվում է պետական պայմանագրային համակարգի միջոցով, որն իրականացվում է պետական մատակարարման, առևտրի նախարարության մարմինների միջոցով: Արտադրանքի մնացած մասի մատակարարումները կազմակերպվում են ուղղակի տնտեսական կապերով կամ միջնորդների՝ առևտրական մեծածախ ձեռնարկությունների միջոցով:

Մեր կարծիքով, պետական պատվերների բարձր տեսակարար կշիռը սահմանափակում է ձեռնարկությունների ինքնուրույնությունը՝ պայմանագրերի կնքման և համագործակցողների ընտրության գործում, կաշկանդում է դրանց նախաձեռնությունը և հակասում ձեռնարկությունների մասին օրենքի դրույթներին, որտեղ ասվում է. «Պետական պատվերները ձեռնարկությանն են տրվում վերադաս մարմնի կողմից և կարող են տեղաբաշխվել մերժումով: Պետական պատվերներ տալիս պետք է նախատեսվի կողմերի՝ կատարողի ու պատվիրատուի փոխադարձ պատասխանատվություն»³: Սակայն

² Известия, 6. IX. 1990,

³ ԽՍՀՄ օրենքը պետական ձեռնարկության (միավորման) մասին, Երևան, 1987, էջ 33:

արտադրության մեջ առաջանում են պատվերների բաշխման տարաձայնություններ:

Այսպես, նախարարությունը «Ավտոմատիկա» արտադրական միավորման պետական պատվերներում ընդգրկել է սեփական կարիքների համար տեխնոլոգիական սարքավորումների թողարկումը: Իսկ «Հայքիմմեքենա» արտադրական միավորումում միաբերական պոմպերի արտադրությունը պետական պատվերների մեջ չի ընդգրկել, բայց սեփական արտադրության էլեկտրաշարժիչները, որոնք օգտագործվում են միայն նշված պոմպերի համար, ընդգրկվել են պետական պատվերներում: Համաձայն արտադրական ծրագրի, պետական պատվերներով չձևակերպված արտադրանքի իրացման համար ձեռնարկությունները սպառողների հետ ինքնուրույն կընթում են տնտեսական պայմանագրեր:

Հանրապետության նախարարությունները, գերատեսչությունները պետք է ապահովեն անցումը կառավարման տնտեսական մեթոդին, որոշակիորեն վերացնեն ղեկավարման հրամայական ձևերը, իրենց գործունեությունը նպատակամղեն ձեռնարկությունների տնտեսական նոր մեխանիզմի իրականացման, լրիվ տնտեսավարկի ներդրման, աշխատանքային կուլեկտիվներում ինքնակառավարման մեթոդների կատարելագործման համար:

Հանրապետության կառավարման տարբեր օղակներում ստեղծվել են սեփականաշնորհման, տնտեսական ծրագրերի կազմման, արտաքին տնտեսական գործունեության ժամկետային ֆունկցիաներ: Որոշ ֆունկցիաներ սահմանափակվել են: Օրինակ, պլանավորումը ժողովրդական տնտեսության մակարդակով նախկինի ձևով չի կատարվի, այլ կփոխարինվի սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումներով և համալիր ծրագրերով: Արտադրական ծրագրերի կատարման և իրացման իրավունքը տրվում է ազատ ապրանքարտադրողներին (ձեռնարկություններին): Ընդլայնվել են այնպիսի ֆունկցիաներ, ինչպիսին են ֆինանսառավարկային հարաբերությունները: Հանրապետության ֆունկցիաներում վերացվել է արտադրանքի պետական ընդունումը: Հանրապետության սահմանափակվել է ընդհանուր միութենական կարիքների համար պարտադիր պետական պատվերը, ինչը հնարավորություն է բացում շուկայական հարաբերությունների զարգացման համար: Իրականում միութենական ընդհանուր պայմանագրերով հանրապետությունը կամավոր միութենական իրավասությանը պետք է հանձնի միայն այն ֆունկցիաները, որոնց իրականացումը հանրապետությունը համարում է աննպատակահարմար:

Ձեռնարկությունների տնտեսական ազատությունն այն է, երբ նրանց տրվում է իրենց աշխատողների շահերի համար գործելու հնարավորություն և շուկայի իրավիճակին համապատասխան ինքնուրույն որոշել արտադրության կառուցվածքը, վաճառքի ծավալը, արտադրանքի գինը, ընտրել համագործակցողներ: Շուկայական հարաբերությունների անցման պայմաններում արդեն հնացել են գների գործող համակարգը, որին բնորոշ է բազմատեսակությունը՝ հաշվարկային և գնման գները, ձեռնարկության և արդյունաբերության գնման գներ, մշտական և ժամանակավոր մանրածախ գներ, պայմանագրային և ազատ շուկայական գներ և այլն: Ձեռնարկությունները հնարավորություն են ստանում փոխել ենթակայությունը կամ սեփականաշնորհման ուղիով (մանր և միջին ձեռնարկությունները), կամ վերափոխվելով ակցիոներական ընկերությունների (միջին և խոշոր ձեռնարկություններ): Նրանք կարող են իրենց հայեցողությամբ կնքել պայմանագրեր և ինքնուրույն որոշել արտադրության անվանացանկը, սպառողներին և մատակարարներին տրվող արտադրանքի քանակը, կատարել արտադրանքի ազատ իրացում: Ձեռք բերելով նոր իրավունքներ, ընդլայնելով ազատ տնտեսական ոլորտը, ձեռնարկությունները պետք է հաշվի առնեն նաև ծրագրի սահմանափակումները:

Տնտեսական ինքնուրույնության ապահովման համար անհրաժեշտ ենք համարում պետական պատվերների ձևակերպումը միայն կարևոր արտադրատեսակների զտով, որի ծավալը թողարկվող արտադրանքի սոց չպետք է դերպահանք 40 տոկոսի սահմանը: Վետական ձեռնարկության (միավորման) մասին օրենքում պետական պարտավորությունները ներկայացվում են որպես անտեսավարման նոր մեխանիզմի միջուկ: Շտապատ այս չի նպաստում արտադրողի և իրացնողի միջև տնտեսական կարգավորմանը, այնուամենայնիվ, համարվում է որպես ելակետային ցուցանիշ: Ըրավիճակը կարելի է շտկել, հենվելով ուղղակի տնտեսական կապերի վրա, զարգացնելով մեծածախ սուբստրուկտը և օգուտների ռաշխման տնտեսական նորմավորումը: Վերջինս տնտեսական կոլեկտիվներին հնարավորություն կտա ինքնուրույն տնօրինելու վաստակած միջոցները:

Սակայն աթեքային արտահայտությամբ պետական պատվերների գործող պրակտիկան տնտեսական կյանքում առաջ է բերում ռոզմաթիվ դժվարություններ: Պետական պատվերների արթեքային մեծությունը ծառայում է միայն էկոնոմիկայի աճի տեմպերի ապահովմանը: Բայց տղ գերը կարող են կատարել տնտեսական ավելի ուժեղացված խթանները, որոնք կնպաստեն և արտադրանքի աճի և վճարունակ պահանջարկի լրիվ ռավարարումը:

Պետական պատվերների անվանացանկի հստակ որոշումը հնարավոր է, եթե ձեռնարկությունների արտադրանքի պլանը ձեռավորվի պայմանագրերի և սպառողների պատվերների հիման վրա: Այս գործում կարևոր է անցումը մեծածախ առևտրի ուղղակի պայմանագրային ձևին, տնտեսաշարժի ռազայի վրա ձեռնարկությունների փոխադրումը ինքնաֆինանսավորման ձևի, մատակարար-իրացնող կազմակերպությունների հստակ փոխգործունեությունը:

Մատակարարման պլանի կտարման, նյութակտն խրախուսման, պարգևատրման չափերի, սանկցիաների ոչ կատարյալ մեխանիզմը բերում է լատառողներին անհամաչափ մատակարարման պատճաբով պարտքերի և տուգանքների գոյացման:

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար 1990 թվականից իրագործվում է խստացված հսկողություն ժողովրդական սպառման տպրանքների մատակարարման պայմանագրերի կատարման, այդ թվում նաե՝ հանրապետության սահմաններից գուրս ուղարկվող տպրանքների վրա: Նախատեսվում է նաև իրականացնել սպառողական շուկայի և ռենոի վրա պնտական վերահսկողության ուժեղացում, ինվեստիցիոն պահանջարկի սահմանափակման ուղղությամբ միջոցառումներ, պետական պատվերների չկատարման դեպքում տնտեսական սանկցիոնների կիրառում, ֆինանսավարկային նոր հարաբերությունների կիրառում:

Շուկայական էկոնոմիկային անցնելու մասին կառավարության ղեկւղման մեջ նշվում է. «...շարունակվում է պայմանագրային կարգապահության անկումը: Եթե 1989 թ. նույն ժամանակամիջոցում պայմանագրային սրտատակնությունները թերամատակարարվել էին 5,2 միլիարդ ոուբլով, աւաղնթացիկ տարում ժողովրդական տնտեսությանը արտադրանքի թերամատակարարումները կազմել են 8,2 միլիարդ ոուբլի»⁴:

Տնտեսական ինքնուրույնության ընդլայնման, ձեռնարկությունների արտադրանքի թողարկման ավելացման, արտադրության արդյունավետության բարձրացման, շուկայական հարաբերությունների անցնելու սրայմաններ ստեղծելու և շահագրքւթածության ուժեղացման նպատակով ԽՍՀՄ պրեռեդենտի 1990 թ. սեպտեմբերի 6-ի «Շուկայական հարաբերություններին անցնելու առաջնահերթ միջոցառումների մասին» հրամանով նախատեսվում է. «Ժողովրդական տնտեսության մեջ անցնել պայմանագրերի մեծածախ գների լայն կիրառման: 1991 թ. ընթացքում պայմանագրերի կնքման գնորդ որոշվում են ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1983 թ. հունիսի 14-ի № 741

4 Известия, 12. IX. 1990.

որոշման համաձայն մշակված մեծածախ գների հիման վրա»⁵, իսկ արաագրության և տնտեսական կապերը պահպանելու նպատակով «Ժողովրդական տնտեսության կայունացում և էկոնոմիկայի շուկայաչափ հիստական ուղղություններում» ստեղծվում է պետական պայսասագրային համակարգ, որը ստանձնում է պետական պատվերների տեղաբաշխումը՝ պայմանագրերի հիման վրա:

Պրակտիկայում լրիվ տնտեսաշարժի և ինքնաֆինանսավորման պայմաններում տնտեսական նորմատիվների համակարգի կոմպլեքս օգտագործման համար կարևոր քայլ է արվել, որը հնարավորություն է տալիս կրճատել դիրկտիվ ցուցասիշխները և ընդլայնել ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնությունը: Իրա հետ սերկայումս օգուտների բաշխման և բյուջեին վճարված նորմատիվային կարգը չափից ավելի բարդացել է՝ դեռևս չհամապատասխանելով լրիվ տնտեսաշարժի սկզբունքներին:

Լրիվ տնտեսաշարժի և ինքնաֆինանսավորման մեթոդով գործող ձեռնարկությունների համար սահմանվել են տնտեսաշարժային եկամուտների (շահույթի) բաշխման նորմատիվներ՝ արտադրական ֆոնդերի, աշխատանքային ռեսուրսների վճարման համար, մասհանումներ պետբյուջեին (այդ թվում՝ տեղական բյուջեին), արտադրության զարգացման կենտրոնացված ֆոնդին, գիտության ու տեխնիկայի և նախարարության ղեկավարին, պետական արտադրական միավորման ֆոնդին: Իսկ ձեռնարկության տրամադրության տակ մնացած տնտեսաշարժային եկամուտից (շահույթից)՝ արտադրության, գիտության, տեխնիկայի և սոցիալական զարգացման ֆոնդին: Նշված ֆոնդերի գոյացումից հետո մնացած գումարը, որպես տնտեսաշարժային եկամուտ (շահույթ), կազմում է կոլեկտիվի աշխատանքի վճարման ֆոնդը:

Բյուջեի հետ փոխհարաբերությունների ամբողջ պատմության ընթացքում դժվար է հիշել նման բարդ հակասություններով լի հաշվարկի ձև, ինչպիսին կատարվում է այժմ: Բյուջե մուծման եսթակա հարկի վերջնական գումարը որոշելու համար պահանջվում են բազմաթիվ հաշվարկներ: Պարզ չէ նաև շահույթից հարկի գումարի որոշման մեխանիզմը: Հարկման մեխանիզմը չպետք է արգելակի արտադրությանը շահույթը ավելացնելու գործում: Մեր կարծիքով պետք է սահմանել չհարկվող շահույթի մեծություն, որը պետք է մնա ձեռնարկության տրամադրության տակ, այնուհետև նշված մեծությունից բարձր շահույթի համար սահմանել հարկի գանձման տարբեր տոկոսներ:

ձեռնարկություններից և կազմակերպություններից հարկի մասին օրենքը, որը գործողության մեջ է մտել 1991 թ. սկզբից, ըստ որի նրանք եկամտահարկ են վճարում ոչ թե եկամտից, ինչպես մինչ այդ էր, այլ հաշվեկշռային շահույթից: Ըստ այդ օրենքի բոլոր ձեռնարկությունները, միավորումների ու կազմակերպությունների համար սահմանվել է ժախսերի հաշվառման միասնական կարգ:

Տնտեսական մեխանիզմի վերակառուցման դժվար հարցերից մեկը աշխատավորության շահագործվածության բարձրացումն է: 1987 թվականից ձեռնարկություններում մտցված է արտադրության արդյունավետության ցուցանիշների բարելավման համար պարգևատրման համակարգ: Մեկայն մի քանի նախարարություններ և գերատեսչություններ խախտել են նրա ներդրման ժամկետները: Տնտեսական ռեֆորմը չի դրժի, ռեալ արդյունքներ չի տա, եթե չորոշվեն յուրաքանչյուր աշխատավորի անձնական շահերը: Իսկ դրա համար անհրաժեշտ է առանձնակի պատասխանատվությամբ մոտենալ աշխատանքի վարձատրության նոր պայմաններին անցնելուն:

⁵ Известия, 6. IX. 1990.

⁶ Հայաստան, 31. XI. 1990:

Մեր ուսումնասիրած լրիվ տնտեսաշարժարկով աշխատող ձեռնարկություններում չի ապահովվել նյութական խրախուսման պլանային ֆոնդերի գումարը: Նախատեսված 32,2 մլն ռ. պլանային գումարի փոխարեն այն կազմել է 30,0 մլն ռ. (93,1 տոկոս), չնայած 1989 թ. հետ համեմատած նյութական խրախուսման ֆոնդի գումարն աճել է 4,1 մլն ռ. կամ 15,6 տոկոսով: Տրնտեսաշարժարկի և ինքնաֆինանսավորման մեթոդով աշխատող ձեռնարկությունների եկամուտը 1989 թ. կազմեց 145,5 մլն ռ., պլանով նախատեսված 160,6 մլն ռ. փոխարեն, իսկ օգուտները 25,4 մլն ռ.՝ 25,5 մլն ռ. պլանի դիմաց: Միութենական ենթակայության ձեռնարկությունները օգուտների պլանը կատարել են 82,2 տոկոսով: Օգուտների պլանի թերակատարման հետ կապված տնտեսաշարժարկին 50 ձեռնարկություններ աշխատավարձ վճարելու համար ստիպված օգտվել են վարկային ծառայությունից:

Զգալիորեն պակասել են ձեռնարկությունների արտադրական և սոցիալական զարգացման հնարավորությունները:

Ձեռնարկությունների աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման համար որոշակի խրախուսիչ նշանակություն ունի սպառման հասարակական ֆոնդերին վճարումների ավելացումը, քանի որ ձեռնարկության ընդհանուր ծախսերի մեջ բարձրանում է աշխատանքային ծախսումների բաժինը, և ինչպես նշում են նրա կողմնակիցները, բարձրանում է ֆոնդերի տնտեսման շահագրգռվածությունը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ աշխատուժի քիչ թվաքանակով առաջադրանքների կատարման դեպքում հավելավճարումը էական ազդեցություն չի գործում, հետևաբար չի նպաստում ձեռնարկությունների կենդանի աշխատանքը տեխնիկական և կազմակերպական գործոններով փոխարինելու իրավիճակին: Չնայած խրախուսող ասպեկտի որոշակի առկայությանը, դրան առավելություն տալու բավարար հիմքեր չկան, քանի որ կենդանի ուժի տնտեսման շահագրգռվածությունը, մեր կարծիքով, բխում է ոչ այնքան արտադրանքի արժեքի մեջ աշխատանքային ծախսումների բաժնի արհեստական ավելացումից, որքան տնտեսված միջոցների ազատ տնօրինման աստիճանից:

Կարծում ենք, պետք է վճռականորեն հրաժարվել նման կարգով տնտեսական ցուցանիշ և նորմատիվ հաստատելու պրակտիկայից: Դա հնարավոր է լինի ձեռնարկությունների կառավարման մեխանիզմի համաձայնեցված կարգավորման և աշխատողների աշխատավարձի պրոգրեսիվ աճի մեխանիզմի վրա հիմնվելու դեպքում: Պետք է գործողության մեջ դնել աշխատուժի զբաղվածությունը կարգավորող, սոցիալական պաշտպանվածությունը ապահովող համակարգեր:

Ֆոնդերի վճարման նպատակահարմարությունը կախված է պետության և տնտեսաշարժարկին օղակների միջև եղած հարաբերությունից: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ժամանակի ընթացքում ֆինանսավորման ընդհանուր համակարգում կենտրոնացված ֆինանսավորումը պետք է իր տեղը զիջի ինքնաֆինանսավորման սկզբունքին: Վերջինիս պայմաններում ֆոնդերի համար սահմանված վճարը իմաստազրկվում է, որովհետև լրիվ տնտեսաշարժարկի և ինքնաֆինանսավորման պայմաններում ֆոնդերը գտնվում են ձեռնարկության տրամադրության տակ, ուստի դրանց համար կրկնակի վճարը կորցնում է տնտեսագիտական իմաստը:

Աշխատավարձի ֆոնդը տնտեսաշարժարկի առաջին մոդելի դեպքում դիտվում է որպես ինքնուրույն մեծություն և սահմանված նորմատիվով հաշվարկվում է 1 ռ. զուտ արտադրանքի ցուցանիշի նկատմամբ: Կոյնիտիվի իրավունք ունի աշխատավարձի համար նախատեսված միջոցները միասին նյութական խրախուսումների գումարներին, որով գոյանում է աշխատողի շիվարձատրություն միասնական ֆոնդ: Այն հնարավորություն է տալիս ուժեղացնել աշխատողներին տրվող դրամական վճարումների խթանող դերը:

Ձեռնարկությունների մեծ մասը կիրառում է տնտեսաշարժի առաջին մոդելը, հիմնվելով օգուտների նորմատիվային բաշխման վրա և միայն մի քանի միավորումներ կիրառում են տնտեսաշարժի վճարման երկրորդ առավել առաջավոր մոդելը՝ հիմնված եկամուտների նորմատիվային բաշխման վրա:

Տնտեսաշարժի նրկու մոդելների դեպքում տնտեսական խրախուսման ֆունկցիան, միջին աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության աճի հարաբերության միջև առաջանում է հակասություն: Նորմատիվ արտադրանքի յուրաքանչյուր մեկ տոկոս աճի դիմաց աշխատավարձի ընդհանուր ֆոնդի աճը բարդացնում է բաշխման համակարգը: Նպատակահարմար է պետական և տեղական բյուջեների միջև սահմանել օգուտների բաշխման նորմատիվային կարգ, իսկ զրուտ օգուտների գոյացումը համարել որպես նախարարությունների և ձեռնարկությունների աշխատանքի վճարման ավանսավորված մասի լրացում: Այդ տնտեսական գրույթի իրականացումը ոչ կատարյալ տնտեսական մեխանիզմի պայմաններում կարող է ունենալ քիչ կողմնակիցներ, պատճառաբանելով, որ ձեռնարկություններում օգուտների բաշխման ընդհանուր նորմատիվը, նյութական խրախուսմանն ուղղված միջոցների ավելացումը կարող են գործել ի վնաս արտադրության զարգացման: Այդպիսի վտանգ չկա, սակայն հնարավոր է դրան հասնել ձեռնարկությունների ներտնտեսական մեխանիզմի կոմպլեքսային բարելավման, նախարարության և ձեռնարկությունների միջև տնտեսաշարժային փոխհարաբերությունների կատարելագործման, ինչպես նաև ներտնտեսական մեխանիզմի բաղկացուցիչ տարրեր փոխհամաձայնության վերականգնման ուղիով: Վերջինս ձեռնարկությունների գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական և արտադրության համամասնական զարգացման որոշիչ նախադրյալ է:

Ձեռնարկություններում ներարտադրական տնտեսաշարժի արդյունավետությունը կանխորոշվում է ոչ թե ընտրական ձևով կամ ըստ փուլերի, այլ միաժամանակ և հաջորդաբար տարածվելով ոչ միայն արտադրությունում, այլ նաև ֆունկցիոնալ ստորաբաժանումներում:

Մինչև ինքնաֆինանսավորման պայմաններին անցնելը, ձեռնարկությունների հիմնական արտադրական ստորաբաժանումները վերջնական արդյունքին դժվար էին հասնում, քանի որ օժանդակ, սպասարկող և ֆունկցիոնալ ստորաբաժանումների աշխատանքը և դրանց ներդրումը ընդհանուր արդյունքի մեջ չէին խրախուսվում:

Ձեռնարկությունների հիմնական արտադրական ստորաբաժանումները միշտ չէ, որ շահագրգռված էին վերանայել նորմաները, իսկ նյութական և աշխատանքային ծախսումների գործող նորմաների պայմաններում որանք որոշակի արտոնություններ էին ստանում: Դա ձեռնտու է ձեռնարկությունների տնտեսական ղեկավարությանը, քանի որ դործունեության վերջնական արդյունքը կախված է հիմնական արտադրությունից: Ինքնաֆինանսավորման պայմաններում ձեռնարկությունների տնտեսական ղեկավարությունը պատասխանատվություն է կրում հիմնական արտադրական և սպասարկող ու ֆունկցիոնալ ստորաբաժանումների գործունեության նյութական և ֆինանսական ապահովման համար:

Լրիվ տնտեսաշարժի և ինքնաֆինանսավորման պայմաններում ձեռնարկությունների հաջող աշխատանքի նախադրյալներից մեկը հաստատվող տնտեսական նորմատիվների հիմնավորումն է:

Էկոնոմիկայի կառավարման կենտրոնացված սկզբունքը այդ նորմատիվներում ճկունորեն զուգորդվում է ապրանքառաժամական հարաբերությունների և արժեքի օրենքի օդատարածման հետ: Պետք է բնութագրել նորմատիվների կիրառման ոլորտը, նորմատիվ հիմքերի վրա փոխադրել բյուջեի հետ պետական ձեռնարկությունների փոխհարաբերությունների համակարգը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ տնտեսական նորմատիվները հաստատվել են առանց հաշվի առնելու ձեռնարկությունների պա-

հանջները, որը հնարավորություն չի տալիս լրիվ չափով ֆինանսավորել պլանով նախատեսված բոլոր միջոցառումները:

Տնտեսական նորմատիվների սահմանման տարաձայնություններ են հղել մեքենաշինական համալիրի «Հայէլեկտրապարատ», «Հայէլեկտրամեքենա» «Հայէլեկտրաշարժիչ», «Ալմաստ», «Տեխնոլոգիական սարքավորումների» արտադրական միավորումներում: Միութենական, միութենական-հանրապետական և հանրապետական ենթակայության ձեռնարկությունների մեծ մասում տնտեսական նորմատիվները բավարար չափով հիմնավորված են, և ձեռնարկությունների կողմից տարաձայնություններ չեն հղել:

Լրիվ տնտեսական պայմաններում նախադրյալներ են ստեղծվում նըշված հակասությունները պակասեցնելու համար:

Ներտնտեսական ամբողջ համակարգի շրջանակներում կարևոր նշանակություն ունի ստորաբաժանումների միջև տնտեսական կապերի և կամուրջների մնացորդային շահույթի բաշխումը ձեռնարկությունների աշխատանքի վերջնական արդյունքում դրանց ներդրումներին համապատասխան: Հաշվի առնելով տնտեսական պայմանագրերով մատակարարման պայմանները մնացորդային շահույթի բաշխումը լրացնում է ձեռնարկությունների աշխատանքի վճարման ֆոնդի ավանսավորման մասի մեծությունը մինչև արտադրանքի իրացումը: Նպատակահարմար է օգուտները (տնտեսական կապերի տնտեսումը) արտադրական ֆունկցիոնալ ստորաբաժանումների միջև բաշխել նորմատիվների օգնությամբ, միջոցների մի մասը թողնելով ստորաբաժանումների տրամադրության տակ, իսկ մյուսի հաշվին գոյացնել արտադրության զարգացման ֆոնդերի մի մասը և ձեռնարկության սոցիալ-տնտեսական զարգացման ֆոնդ:

Կարծում ենք, նպատակահարմար է աշխատավարձի և պարգևատրման ֆոնդը թողնել կոլեկտիվի տրամադրության տակ: Սակայն հարցը դժվար է լուծվում, քանի որ ձեռնարկությունը չի կարող ծածկել առանձին արտադրամասերի անարդյունավետ աշխատանքի ծախսերը:

Ներտնտեսական մեխանիզմում տեղ գտած թերությունների պատճառով մինչև այժմ չի որոշված ձեռնարկությունների կոլեկտիվների միջև իրենց վաստակի լավագույն բաշխման չափը: Ըստ երևույթին, դժվար թե հնարավոր լինի այն որոշել նույնիսկ հետագայում աշխատանքի վճարման համակարգին լրիվ անցնելու դեպքում: Ձեռնարկությունների տրամադրության տակ եղած միջոցների շրջանակներում յուրաքանչյուր աշխատողի աշխատանքային ներդրում առանց սահմանափակումների, պետք է որոշել, հենվելով համամիութենական տարիֆավորման համակարգի և աշխատանքային մասնակցության գործակցի վրա: Անհրաժեշտ է տնտեսական կառավարման գործման և աշխատանքի վճարման փոխկապակցությամբ հետ բարելավել աշխատանքային կոլեկտիվների ինքնակառավարումը: Այդ խնդրի լուծմանը կարող է նպաստել պետական ձեռնարկության (միավորման) աշխատանքային կոլեկտիվի խորհրդի և ղեկավարության միջև փոխհամաձայնությունը:

Ողած արդյունքները համոզում են, որ այն աշխատանքային կոլեկտիվների խորհուրդներն են ակտիվորեն ազդում ձեռնարկությունների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վրա, որտեղ ղեկավարները գործունյա և բանիմաց աշխատողներ են:

Մեր հանրապետությունում մեքենաշինական ձեռնարկությունների կոլեկտիվների տնտեսական խորհուրդները հանդես են գալիս ղեկավարությանը կից խորհրդակցական մարմնի դերում: Դրանք ձևավորվում են ձեռնարկության վարչության ազդեցության տակ և գործունե միջամտությամբ, որը խորհուրդներին ազատ գործելու հնարավորություն չի տալիս: Այդ պատճառով առանց աշխատանքային կոլեկտիվի խորհուրդների արմատական վերափոխման, տնտեսական կառավարման օղակի ինքնուրույնության ընդլայնման ցանկալի արդյունք չի ստացվում: Ծրագրերը կարող է լուծվել, եթե ղեկավարության որոշ իրավունքներ կրճատվեն և տրվեն խորհուրդներին:

Շուկայացումը, ձեռնարկությունների փոխադրումը ինքնուրույն կարգավիճակի պահանջում է վերանայել ճյուղային մարմինների նպատակահարմարությունը: Սոցիալ-տնտեսական, քաղաքական նոր պայմաններում նպատակահարմար ենք գտնում հասարակատեղիային տարածքում տեղակայված արդյունաբերական ձեռնարկությունների կազմակերպումը կենտրոնացնել մեկ սիստեմային սահարարության մեջ: Սահարարության ապարատի և ձեռնարկությունների միջև տնտեսաշարժի և ինքնաֆինանսավորման հարաբերությունների զարգացումը հնարավոր կլինի, եթե առաջինի ստորաբաժանումների աշխատանքը գիտականորեն հիմնավորվի և ճիշտ գնահատվի: Սահարարությունների կառավարման ապարատի պահպանման համար միջոց պետք է ծառայեն ձեռնարկությունների վճարումները: Հետևաբար, կառավարման ապարատի կառուցվածքը և թվաքանակը պետք է կախված մեջ լինի վճարումների գումարից:

Կենտրոնացված ֆոնդերի հաշվին ձեռնարկությունների տեխնիկական և պլանային-տնտեսական կառավարչությունները տեխնիկատնտեսական ցուցանիշների մշակման և լավագույն տարբերակի ընտրության հիման վրա պետք է որոշեն որտեղ և ինչպես օգտագործել առանձնացված սիջոցները՝ նոր շինարարության, վերակառուցման, թե արտադրության ընդլայնման համար: Տնտեսական հարաբերությունների այդպիսի վերակառուցման պայմաններում կառավարման ճյուղային ապարատը չպետք է պատասխանատու լինի ձեռնարկությունների գործունեության համար:

Սահարարության ապարատի մակարդակով նորմատիվային ակտերով նախատեսված է աշխատողների աշխատանքի վճարման և խրախուսման նոր կարգ, ինչպես նաև ճյուղային կառավարման մեջ դեմոկրատական սկզբունքների ուժեղացման միջոցառումների համակարգ:

Սահարարության ապարատի աշխատողներին պարգևատրելը այժմ կարևոր նշանակություն է ստանում:

Նրանց իրավունք է տրվում հաստատել ապարատի աշխատողների հաստիքային ցուցակները և աշխատավարձի ֆոնդի սահմաններում սահմանել դրույթները: Այդ ֆոնդի տնտեսման գումարի մինչև 70 տոկոսը մնում է նրանց տրամադրության տակ, որը կօգտագործվի արտադրության լավագույն աշխատողներին հավելավճարների և պարգևատրումների սահմանման համար: Այդ փողոցները հիմք են ստեղծում իրականացնելու վարչական աշխատի աշխատողների աշխատավարձի բաժանումը երկու մասի՝ մշտական, որը պետք է վաստակել համապատասխան պարտականությունները սահմանված ժամկետում կատարելու համար և փոփոխական: Մաս: Իսկ վերջինի մեծությունը անհրաժեշտ է կախված մեջ դնել տնտեսման արդյունքի գումարից, աշխատանքի արդյունքում արտացոլելով արտադրական ձեռնարկությունների մասնակցության չափը:

Սահարարության ապարատի աշխատանքի գնահատման բարելավման հետագա կարգը թույլ կտա իրականացնել ձեռնարկության (միավորման) մասին օրենքի դրույթները, որտեղ նշվում է կառավարող օրգանների պատասխանատվության մասին:

Հանրապետության սահարարությունները, գերատեսչությունները զգալի օգնություն են ցուցաբերում ձեռնարկություններին տնտեսական մեխանիզմի յուրացման, ներտնտեսական հաշվարկի, պարգևատրման նոր համակարգի ներդրման գործում: Հայկական Հանրապետության Պլանային կոմիտեն, սահարարությունները ժամանակին ձեռնարկություններին են հասցրել 1991 թ. պլանների մշակման ելքային տվյալները՝ պետական պատվերները, տնտեսական նորմատիվները և լիմիտները: Սակայն մեխանիզմի վերակառուցումը տեղի է ունենում ոչ բավարար ակտիվությամբ: Ներտնտեսական հաշվարկը դեռևս լրիվ տարածում չի ստացել: Սահարարությունների, ձեռնարկությունների որոշ ղեկավարներ լրիվ տնտեսաշարժի և ինքնաֆի-

նանսավորման պայմաններում ձևական մոտեցում են ցուցաբերում աշխատանքի կազմակերպման նկատմամբ:

Երկրի էկոնոմիկայի ներկա վիճակը պահանջում է ժողովրդական արտադրության տարբեր ճյուղերում նշանակալիորեն ուժեղացնել աշխատանքի կոորդինացումը կառավարման կատարելագործման ուղղությամբ: Որպես տնտեսությունը կայունացնելու միջոցառում, շուկայական հիմնական ուղղություններում նախատեսվում է «...ֆինանսների և դրամական շրջանառության առողջացում, արտադրության և փոխադարձ մատակարարումների պաշտպանություն, սպառողական շուկայի կարգավորում, երկրի արտաքին տնտեսական դրության կայունացում», «...հանրապետություններն ու տեղական մարմինները աշխատանք են ծավալում ձեռնարկությունների վրայից հանելու սոցիալական ոլորտի օբյեկտների պահպանման գծով չափից ավելի և անհամաչափ բաշխվող բեռնվածությունը: Դրանով իսկ կոլեկտիվի ձեռնարկությունների միտքը շուկայական հարաբերություններ, կրթությունը նրանց մրցակցությունը»: Այդ խնդրի լուծման համար որոշակի նշանակություն են ձեռք բերում ճյուղի կենտրոնացված ղեկավարումը, տնտեսական մեխանիզմի կառավարման կազմակերպման կառուցվածքի հաշվեկշռված, համամասնական զարգացումը: Լրիվ տնտեսաշարժի և ինքնաֆինանսավորման պայմաններում արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքի արդյունքների ամփոփման տվյալները համոզում են, որ դրանց որոնելի տնտեսաշարժային մոդելի հիմնական գծերը պետք է լինեն՝ առաջին, պատվերների ընտրության ազատ իրավունքը, երկրորդ, շահույթի բաշխման տնտեսական նորմատիվների համակարգը և տնտեսաշարժային շահույթի գումարը, որպես աշխատավարձի ֆոնդի ավանսավորված մասի լրացուցիչ աղբյուր, երրորդ՝ ներտնտեսական մեխանիզմի համալիրի կատարելագործումը, չորրորդ՝ նախարարության ներսում կառավարման ապարատի աշխատանքի տնտեսական գնահատման բարելավումը:

ХОЗРАСЧЕТНЫЕ СТИМУЛЫ ЭКОНОМИЧЕСКОЙ РЕФОРМЫ

А. М. ОВАКИМЯН

Р е з ю м е

Полное функционирование механизма хозрасчета в основном звене экономики—это задействие определяющей стимулирующей «плоскости» перестройки планового управления экономикой.

Главными чертами модели хозрасчета основного звена экономики должны быть: во-первых, право на выбор заказа (государственного или потребителей); во-вторых, экономические нормативы распределения прибыли, включая платежи за природные ресурсы и образование чистой прибыли как дополнений к авансированной части оплаты труда; в-третьих, взаимосвязанное совершенствование внутрихозяйственного расчета оплаты труда и самоуправления; в-четвертых, улучшение экономической оценки работы аппарата управления министерств.